community

The New Apostolic Church around the world

01/2017/AM

2017 թվականի նշանաբանը՝

Փառաբանել Աստծուն՝ մեր Հորը

Ժամերգություն Բրազիլիայում՝ Սեր առ Հիսուս

Դավանաբանություն՝ Աղոթք և զոհաբերություն

Դավանաբանություն՝ Ամուսնություն և ընտանիք

New Apostolic Church International

Փառք Աստծուն՝ մեր Հորը

Միջազգային ԱՄՏ

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

,,Փառք Աստծուն, մեր հորը,,- այպես է գրված Պողոս առաքյալի ֆիլիպպեցիներին ուղղված նամակում: Վաղեմի միտք է՝ Աստծուն, ով ամեն ինչ արարել է, փառաբանելը, այսինքն նրա զորությունը հրապարակային գովաբանելը և նրա անսահման բարությունները բարձրաձայն տեղեկացնելը: Սակայն մարդիկ անընդհատ հեռանում են նման դիրքորոշումից, և ընդհակառակը, նրանք իրենց կյանքի բոլոր կարիքների համար պատասխանատու են դարձնում Աստծուն:

Այսօր իմ կոչը հնչում է այսպես՝ փառաբանենք Ասատծուն՝ մեր Հորը:

Սա պետք է ոչ միայն 2017 թվականի նշանաբանը լինի, այլ՝ մեր կյանքի և հավատի շարունակական ճանապարհի: Աստծուն՝ Հորը փառաբանել – ինչպե՞ս կարող է դա լինել: Օրինակի համար, ես նշում եմ երեք առաջադրանք՝

- Ճանաչենք Աստծո մեծությունը: Նա Արարիչն է, ումից եկավ ամեն ինչ, ինչպես տեսանելի արարչագործությունը, այնպես էլ՝ ողջ փրկության պատմությունը: Մեր առաջադրանքն է, իմաստությամբ և բարությամբ վերաբերվելու նրա արարչագործությանը: Թեև Աստված տվել է բնական ռեսուրսներ, սակայն դրանց բաժանման և պահպանման պատասխանատվությունը ընկած է մեզ՝ մարդկանցս վրա:

- Նրա բոլոր ընծաների համար մենք կասենք շնորհակալություն նրանով, որ մենք կկատարենք նրա կամքը, անգամ այն ժամանակ, երբ մեր կյանքը տանջալից է: Զոհաբերություն անենք նրա համար: Ավելի շատ նրան վստահենք, քան՝ բողոքենք մեր հոգսերից: Նա մտահոգվում է մեզ համար, չնայած մենք մեղավորներ ենք: Մյուս կողմից, մենք պետք է ուշադրություն դարձնենք յուրաքանչյուր մարդու արժանապատվության վրա: Աստված բոլորի Հայրն է: Մենք փառաբանում ենք մեր Հորը, եթե մենք խնդրում ենք յուրաքանչյուրի փրկության համար, ովքեր մեզ վիրավորել են:

- Տեղեկացնենք նրա փառահեղությունը նրանով, որ մեզ պահենք որպես Աստծո զավակներ:

Աստծո առաջ մենք նման ենք երեխաների. մենք քիչ գիտենք, իսկ նա ամեն ինչ գիտի: Կարևոր է նրա հեղինակությունը ճանաչելը և նրան ծառայելու պատրաստակամ լինելը : Դա մեր սեփական ազատության սահմանափակում չէ, այլ՝ օրհնանքի աղբյուր:

Մենք պետք է Աստծուն՝ մեր Հորը փառաբանենք: Նա ամենամեծն է, քան՝ մնացած ամեն ինչ, ոչինչ չի կարող նրան խանգարել մեզ տալու նրա թագավորությունը: Նրա կյանքը, որ նա ներ է դրել մեզ համար, պետք է զարգանա: Այսպես մենք նրա երեխաների հետ միություն կդառնանք այն գիտակցությամբ, որ կա միայն մեկ Աստված և Հայր, ով վեր է ամեն ինչից, ամեն ինչով է և ամեն ինչում է,,:

Երեք կետանոց ծրագիրը 2017 թվականի համար հնչում է՝

- Ճանաչենք Հայր Աստծո փառահեղությունը իր գործերով:
- Շնորհակալ լինենք նրան նրա բարությունների համար:
- Տեղեկացնենք նրա փառահեղությունը նրանով, որ մեզ պահենք ինչպես աստծո զավակներ:.

Այս մտայնությամբ էլ ես ձեզ ցանկանում եմ շատ ուրախություններ և Աստծո օրհնանք գալիք տարում :



Սեպտեմբերի 28-ին գլխավոր առաքյալը ժամերգություն անցկացրեց Գրամադոյում / Բրազիլիա: Քաղաքը գտնվում է 27 դաշնային պետությունների ամենահարավային մասում, Ռիո Գրադե դո Սուլում:

Լուսանկարը՝ ՆԱԵ Բրազիլիա

Սեր առ Հիսուս

Ղուկաս 7; 47,48

Դրա համար քեզ ասում եմ, իր անհամար մեղքերը կներեն սրան, որովհետև ուժգին սիրեց, քանզի ում շատ է ներվում, շատ է սիրում, և ում սակավ՝ սակավ: Եվ ասաց նրան՝ քո մեղքերը քեզ ներված են:

Սրտանց սիրելի եղբայրներ և քույրեր, ինձ համար ուրախություն է ձեզ հետ այս ժամերգությունը ապրել կարողանալը: Ես մտածել եմ, թե սիրելի Աստված ինչ ունի այսօր մեզ ասելու, և առաջին միտքը, որ իմ հոգում է գտնվում, այն է, որ մենք չպետք է կորցնենք մեր արիությունը: Ես լավ գիտեմ, որ հեշտ չէ, այստեղ, այս երկրում նորառաքելական լինելը, քանի որ եղբայրների ու քույրերի քանակը քիչ է և համայքներն էլ իրարից հեռու են գտնվում: Ես կարող եմ պատկերացնել, որ մեկ-մեկ այն մտքին ենք հանգում, որ հավատքի շատ համայնքներ կան այս երկրում, որոնք մեծ հաջողություններ ունեն, իսկ մենք Աստծո գործում քիչ հաջողություն ունենք: Մյուսներն ունեն հեռուստահաղորդավարներ և փող, իսկ մենք այնքան փոքր միություն ենք: Ուրեմն, ի՞նչ պետք է անենք: Պատասխանը շատ հստակ է: Հիշեք այն դրվագի մասին, երբ Պետրոսը ամբողջ գիշեր ձուկ էր որսում, բայց ոչինչ չէր բռնել: Գալիս է Հիսուսը և ասում նրան.,,Քշիր, տար դեպի խորքերը, և

ձեր ուռկանները գցեցեք որսալու համար,,: Պետրոսը մասնագիտությամբ ձկնորս էր, նա հաստատ գիտեր, դա ոչինչ չի տա, բայց նա ասաց.,,Քո խոսքի համար ուռկանները կգցենք,,/ ՂԿ 5;4,5/: Նա նավակը առաջ է վարում և հրաշալի որս կատարում: Տերը ինքն է այս դիպվածը որպես Ավետարանի տարածման պատկեր օգտագործել: Սիրելի եղբայրներ և քույրեր, եկեք հոգանք այն բանի համար, որ առաքյալների ուսմունքը շարունակաբար փոխանցվի: Խոսքը այն բանի մասին չէ, թե ինչքան միջոցներ, ինչ մեթոդներ մենք ունենք: Խոսքը նրա մասին չէ, որ նորառաքելական եկեղեցու համար շատ անդամներ ձեռք բերենք, դա չէ մեր նպատակը: Խոսքը նաև նրա մասին չէ, որ մենք շատ մարդկանց զոհաբերենք:

Խոսքը նրա մասին է, որ աշակերտներ գտնենք, ովքեր իսկապես կհետևեն Տեր Հիսուսին: Խոսքը նրա մասին է, որ հոգիներ գտնեն, որոնք կպատկանեն Տիրոջը: Ուստի, խոսքը չի գնում ինչ որ մեթոդների մասին: Միայն մի բան է կարևոր, որ պետք է այնպես գործել, ինչպես Պետրոսը, պարզապես՝ Հիսուսի կամքը կատարել: Եղբայրներ և քույրեր, դա պետք է մեր նշանաբանը լինի. մենք պետք է ձգտենք Ավետարանը կիրառելի դարձնել, առօրյայում այնպես ապրել, ինչպես Տերը մեզնից կսպասեր : Մեր կերպարը գրավելու է մարդկանց, որոնց Աստված կցանկանար առաջնորդել: Եկեք շարունակենք այն բանի վրա աշխատել, որ Ավետարանը կյանքի կոչենք, Տիրոջը հետևենք և մեր պահվածքով այլ մարդկանց գրավենք:

Նորից. խոսքը նորառաքելական եկեղեցու համար անդամներ գտնելու մասին չէ : Խոսքը ճշմարիտ աշակերտներ գտնելու մասին է, ովքեր իրականում կհետևեն Հիսուսին և կցանկանան նախապատրաստվել Տիրոջ օրվան: Կարդացված խոսքը հավանաբար անսովոր է հնչում: Որպեսզի այն կարճ նկարագրենք, համեմատենք Հիսուսի այցի մասին համատեքստի հետ, երբ Հիսուսը այցելեց Սիմոնին՝ փարիսեցուն: Հացկերույթի ժամանակ մի կին է ներս մտնում: Բոլորը նրան որպես մեղսավոր էին ճանաչում: Նա սկսում է լաց լինել, Հիսուսի ոտքերը լվանալ իր արցունքներով, հետո հաբուրում և իր մազերով չորացնում ու յուղով օծում է: Ներկա գտնվողները զայրանում են, թե ինչու է նա այդ մեղավոր կնոջը թույլ տալիս նման բան անելու: Հիսուսը գիտեր նրանց մտքերը և հարց է տալիս Սիմոնին.,,Մի փոխատու երկու պարտապաններ ուներ, մեկը հինգ հարյուր դահեկան պարտք ուներ, իսկ մյուսը՝ հիսուն: Եվ քանի որ նրանք հատուցելու ոչինչ չունեին, երկուսին էլ պարտքը շնորհեց: Ո՞վ ավելի շատ կսիրի նրան,,/ Ղկ. 7;41,42/: Պարզ է, նա , ով հինգ հարյուր ստացավ, նրան ավելի շատ կսիրի: Ապա հետևում է Հիսուսի պատասխանը. ,,Իր անհամար մեղքերը կներվեն նրան, որովհետև ուժգին սիրեց,,/ Ղկ. 7,47/: Հիսուսը դրանով ուզում էր ասել, որ մենք պետք է սիրենք Աստծուն, որովհետև նա մեզ ներում է: Դա վերաբերում է մեզ՝ բոլորիս:

Մենք պետք միշտ գիտակցենք, որ Հիսուսը ներում է մեր մեղքերը: Նրա ողորմածության և սիրո պատասխանը այն է, որ մենք սիրում ենք նրան:

Ի՞նչ է նշանակում այն, որ Աստված ներում է մեր մեղքերը: Նախ, դա նշանակում է, որ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, մեզ համար չարչարվեց և մահացավ: Ես այս մասին չեմ ուզում շատ բան ասել, բայց լավ է, երբ մենք գիտակցում ենք, թե նա ինչ վերցրեց իր վրա՝ մեր նկատմամբ սիրուց ելնելով: Սիրելի եղբայր, սիրելի քույր, դա սիրո ամենամեծ ապացույցն է, որ քեզ տվել է Հիսուս. նա մահացել է քեզ համար: Եթե մենք սիրելի Աստծուն ասենք. դու դեռ սիրու՞մ ես ինձ, մարդկային տեսանկյունով անպատկառություն է: Քրիստոսը մեզ համար է զոհաբերվել: Ավել է՞լ ինչ կարող էր Աստված մեզ համար անել, քան՝ իր Որդուն զոհաբերելը: Հիսուս Քրիստոսը մեզ համար է զոհաբերվել, քանի որ նա մեզ սիրում է և մեր մեղքերը ներում:

> Հիսուսը մեզ ունակ է դարձրել Աստծո հետ միասնությանը հասնելու:

Առաջին մեղքը, որը նա ներեց, դա ժառանգական մեղքն էր: Առաջին ողորմածությունը, որին նա մեզ արժանացրել է, դա մկրտությունն է: Նա լվաց մեր ժառանգական մեղքը և դրանով մեզ ունակ դարձրեց Աստծո հետ միասնություն կազմելու: Սա մի քիչ տեսական է հնչում, բայց այս մասին պետք է հիշել: Մկրտության միջոցով մեզ՝ խեղճ մարդկանցս համար հնարավոր դարձրեց Աստծո հետ միասնություն ունենալը:

Հետո նա ներում է մեր անձնական մեղքերը ամեն անգամ, երբ մենք Աստծո կամքով չենք գործում, ամեն անգամ, երբ մենք Ավետարանի համաձայն չենք ապրում, մեղք ենք գործում, իսկ յուրաքանչյուր մեղք փակուղի է դեպի միասնություն տանող ճանապարհի:

Պատկերացրու, որ դու ունես հնարավորություն Աստծո հետ միասնություն կազմելու, բայց, քանի որ դու մեղք ես գործել, ճանապարհը փակ է: Այո, մենք ամեն օր մարդ չենք սպանում, բայց կան բազում փոքր մեղքեր, որոնք Աստծո հետ միասնության

տանող ճանապարհը փակում են: Եթե մենք տասը պատվիրանների համաձայն չենք գործում, մեղք ենք գործում: Արժե, որ տասը պատվիրանները նորից կարդաանք և ինքներս մեզ հարց տան. ես հարգել ե՞մ սրանք բոլորը: Ամեն անգամ, եթե մենք ինչ որ լավ բան կարող ենք կամ պետք է անենք և չենք անում, մեղք ենք գործում: Եթե մենք այս մասին մտածենք, կհասկանանք, թե ինչքան հաճախ ենք մեղք գործում: Սակայն Հիսուս Քրիստոսի ողորմածությունը մաքրում է բոլոր մեղքերը: Ես հաճախ եմ այս մասին հիշում: Աստված ամենագետ է, նա ամեն ինչ գիտի: Նա չի կարող մոռանալ, քանի որ նրա համար անցյալն ու ներկան մեկ են:

Ես նկատում եմ,որ ծերանում եմ և մոռացկոտ եմ դառնում, բայց Աստված ոչինչ չի մոռանում: Երբ նա մեզ ներում է, ամեն ինչ հեռացնում է. այլևս մեղք չի լինում և այնպիսի վիճակ է լինում, կարծես մենք մեղքի մեջ չենք էլ եղել:

Մեզ համար շատ դժվար է յոթանասուն անգամ յոթ ներելը, ինչպես Հիսուսն էր ասում / Մտթ. 18;22/: Մի ուրիշ անգամ նա ասել է. դու պետք է քո եղբորը օրը յոթ անգամ ներես/ Ղկ. 17;4/: Կարելի՞ է նման բան պահանջել: Դա արիություն է: Դու մտածե՞լ ես երբևէ, թե ինչքան հաճախ են քո նույն մեղքերը ներվել:

Տերը ներում է մեր մեղքերը: Նա մահացել է մեզ համար: Ժառանգական մեղքը լվացված է, որպեսզի մենք կարողանանք Աստծո հետ միասնություն կազմել և մեր մեղքերը ներված են, որոք փակում էին Աստծո հետ միասնություն տանող ճանապարհը: Քանի որ Աստված դա արել է, մենք սիրում ենք նրան: Ինչպե՞ս ենք մենք արտահայտում մեր սերը: Մենք նրան հավատարիմ ենք մնում, քանի որ մենք նրա ողորմածությունն ու սերը գիտենք: Մենք հավատարիմ ենք մնում, քանի որ մենք սիրում ենք նրան, անգամ, եթե նա երբեմն մեր խնդրանքները չի լսում, եթե մեր ցանկությունները չի կատարում, եթե մենք նրանք այլևս չենք կարողանում հասկանալ, եթե նրա օրհնանքը տեսանելի չի լինում:

> Սիրուց ելնելով մնանք նրան հավատարիմ, անգամ, եթե մենք նրան չենք հասկանում:

Հավատքի 400 եղբայրներ և քույրեր են մասնակցել այս ժամերգությանը, դրանցից շատերը կտրել անցել են ավելի քանի 1000 կիլոմետր ճանապարհ:

Այնուամենայնիվ, մենք մնում ենք նրա մոտ: Մենք հավատարիմ ենք մնում նրան, քանի որ մենք ապրել ենք նրա սերը:

Է՞լ ինչպես է արտահայտվում մեր սերը: Նրանով, որ մենք ծառայում ենք նրան: Նրանով, որ մենք անում ենք այն, ինչ նա մեզնից պահանջում է: Մենք ուզում ենք բարին անել: Մենք ուզում ենք ծառայել Տիրոջը, նաև առօրյայում: Քանի որ մենք նրան սիրում ենք, ուզում ենք նրան օգնել: Մենք գիտենք, որ մեր աշխատանքը կայանում է նրանում, որ օգնենք, որպեսզի բոլոր մարդիկ նրա գտնել կարողանան: Մենք ցանկանում ենք նրան օգնել, քանի որ նա բարի է մեր նկատմամբ: Քանի որ մենք նրան սիրում ենք, մենք շնորհակալ ենք և անում ենք այն, ինչը դուր է գալիս նրան: Իսկ ի՞նչն է դուր գալիս նրան: Նրան դուր է գալիս, երբ մենք ներում ենք մեր մերձավորին: Դա մենք անում ենք նրա հանդեպ ունեցած սիրուց: Նա մեզ այնքան շատ է ներել: Նա մեզ փրկել է: Հիմա նա գալիս ինձ մոտ ու ասում. ,, Ես մի խնդրանք ունեմ քեզ. կարո՞ղ ես դու քո մերձավորին ներել,,: Այդ դեպքում ես չեմ կարող ասել. ,, Ոչ, ես դա չեմ անի: Շատ բան է պահանջվում ինձնից,,: Ես պետք է այն մասին մտածեմ, թե Տերը ինչ է արդեն արել ինձ համար: Միայն նրա հանդեպ սիրուց ես անում եմ այն, ինչ նա պահանջում է ինձնից և ներում եմ իմ մերձավորին:

Թույլ տվեք ամփոփել. մենք պետք է միշտ գիտակցենք, թե ինչքան շատ ողորմածության է մեզ արժանացրել Աստված: Աստծո Որդին մեզ համար է զոհաբերվել: Նա մեզ ազատել է ժառանգական մեղքից, որպեսզի մենք կարողանանք միասնություն կազմել Աստծո հետ: Նա միշտ պատրաստ է մեր բոլոր մեծ ու փոքր մեղքերը ներելու, հարյուր անգամ, եթե պետք է: Նա մարում է պարտքերը, նրանք այլևս գոյություն չունեն: Քանի որ նա մեզ այդքան շատ է ներում, պետք է նրան սիրենք: Սիրուց ելնելով պետք է հավատարիմ մնանք նրան, անգամ, եթե մենք այլևս չենք հասկանում նրան, անգամ եթե նա մեզ չի տալիս այն, ինչը մենք նրանից խնդրել ենք, մենք ծառայելու ենք նրան և նրա հանդեպ սիրուց ներելու ենք մեր մերձավորին:

Այստեղ Հիսուսն ասում է. ,, Ձեր բազում մեղքերը ներված են, քանի որ դուք շատ սեր ցույց տվեցիք,,: Այս խոսքերը կարելի է այլ ձևով հասկանալ. քանի որ նա սիրել է. նա նրան ներել է:բՄի պատճառավոր խոսք. Հիսուսը ասել է պատճառը, թե ինչու է նա նրան ներել.,, Քո հավատը փրկեց քեզ: Գնա խաղաղությամբ,,: Որպեսզի մեղքերի քավություն ստանան, պետք է հավատ ունենան: Դա անհրաժեշտ նախապայման է: Պետք է հավատան Հիսուս Քրիստոսին: Պետք է հավատան, որ նա Աստծո Որդին է: Պետք է հավատան, որ նա զոհաբերվել է մեզ համար: Պետք է հավատան, որ նա հարություն է առել: Առանց Հիսուս Քրիստոսին հավատալու ոչ ոք չի կարող փրկվել: Դրանից բացի, մենք հավատում ենք, որ մեղքերը առաքյալներն են ներում և կարողանում են աստվածային լիազորությամբ քավություն տալ: Որպեսզի մեղքերի քավության հասնեն, պետք է ճշմարիտ հավատ առկա լինի;

Որտեղի՞ց են իմանում, որ հավատը ճշմարիտ է, որ

այն ուժեղ է: Պողոս առաքյալը շատ հստակ ասել է. ,, Մեզ փրկեց հավատը, որ սիրով է գործում ,,/ Գաղ. 5;5,6/: Դա է ճշմարիտ հավատը:

Որպեսզի մկրտության ողորմածության հասնեն, պետք է հավատան Հիսուս Քրևիստոսին: Կարող է մկրտվել միայն նա, ով խոստովանում է. ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին: Ինչպե՞ս է գործում այդ հավատը: Տիրոջ հանդեպ սիրուց պետք է նրան հետևել: Ով մկրտվում է, խոստովանում է. ես մերժում եմ չարը և հետևում եմ Հիսուս Քրիստոսին: Ես իմ կյանքը նվիրում են Տեր Հիսուսին: Այլապես մկրտությունը կլինի սոսկ մի ծես՝ առանց ազդեցության: Որպեսզի մկրտության ողորմածությունը ազդեցիկ լինի, պետք է ամուր հավատ ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Այդ հավատը գործելու է սիրով: Պետք է հետևել Հիսուս Քրիստոսին, ապրել նրա Ավետարանի համաձայն: Նա մեզ համար օրինակ է: Քանի որ Հիսուսը մեզ ազատեց ժառանգական մեղքից, մենք սիրում և հետևում ենք նրան :

Այդպես է նաև մեղքերի քավության դեպքում. քավությունն ապրել կարողանալու համար, մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք նրա առաքյալներին, և այդ հավատը գործում է սիրով: Եթե մենք իսկապես սիրում ենք Հիսուս Քրիստոսին, է նրան: Դա սիրո՞ ապա մենք միշտ հարց ենք տալիս մեզ. ես դու՞ր եմ գալիս նրան, թե՞ իմ մեջ կա մի բան, որ խանգարում արտահայտություն է: Մենք պետք է մյուսներին դուր գանք և միշտ քննենք մեզ, արդյոք կա՞ մի բան իմ մեջ, որը դուր չի գալիս տեր Հիսուսին;Այդպես է նաև մեղքերի քավության դեպքում. քավությունն ապրել կարողանալու համար, մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք նրա առաքյալներին, և այդ հավատը գործում է սիրով: Եթե մենք իսկապես սիրում ենք Հիսուս Քրիստոսին, ապա մենք միշտ հարց ենք տալիս մեզ. ես դու՞ր եմ գալիս նրան, թե՞ իմ մեջ կա մի բան, որ խանգարում է նրան: Դա սիրո արտահայտություն է: Մենք պետք է մյուսներին դուր գանք և միշտ քննենք մեզ, ոդյոք կա՞ մի բան իմ մեջ, որը դուր չի գալիս տեր Հիսուսին:

Այս ինքնաքննությունը անհրաժեշտ է, որպեսզի հասնեն մեղքերի քավության: Եթե ես սիրում եմ Տեր Հիսուսին, ապա ես տառապում եմ իմ մեղքերի պատճառով: Այդ դեպքում ես չեմ ասում. ,, Այնքան էլ ամեն ինչ վատ չէ, մյուսներն էլ են այդպես անում,,: Եթե ես գիտակցում եմ, որ իմ հիմարության, փոքրոգության պատճառով փակված է դեպի Հիսուսը տանող ճանապարհը, ես չեմ կարող այլևս դեպի նա գալ, ապա ոչ մի մեղք էլ փոքր չի լինում: Այդ փոքր ստի պատճառով, քանի որ ես ինչ որ բան եմ արել կամ չեմ արել, չեմ կարող այլևս դեպի Տեր Հիսուսը գալ: Այդ դեպքում մեղքը մեզ կցավեցնի: Մենք կտառապենք մեր արարքների կամ վրիպումների պատճառով, քանի որ մենք չենք արել այն, ինչը պետք է անեինք: Քանի որ մենք Տիրոջը սիրում ենք, տառապում ենք մեր մեղքերից:

Քանի որ մենք սիրում ենք Տիրոջը, մենք ամրագրում

ենք. դու պետք է այլ դառնաս, ես ուզում եմ ավելի լավը լինել: Ես ուզում եմ Տեր Հիսուսին դուր գալ, ես ուզում եմ դեպի նա գալ: Պետք է փոխվի: Տիրոջ հանդեպ սիրուց պետք է պատրաստ լինել մերձավորին ներել: Քանի որ հարց ենք առաջադրում մեզ. ի՞նչն է ինձ համար կարևոր՝ միասնությունը Քրիստոսի հետ, թե՞ որ ես եմ անպայման ճիշտ: Որ բոլորը տեսնում են, որ մյուսը ճիշտ չէ, նա պետք է պատժվի՞: Հիսուսի հանդեպ սիրուց մենք ասում ենք. մենք թողնում ենք ամեն ինչ անցնի, ես ուզում եմ Քրիստոսի հետ միանալ: Տիրոջ հանդեպ սիրուց մենք պատրաստ ենք հաշտվողականության, քանիր որ մենք գիտենք, որ նա ցանկանում է, որ մենք միասին լինենք, որ մենք միասնության մեջ ապրենք: Նա մարդկանց մեջ երկպառակություն չի ցանկանում: Նրա հանդեպ սիրուց մենք պատրաստ ենք մեր մերձավորի հետ հաշտվելու:

Որտեղ ինքնաքննություն կա, որտեղ լավացման կամք կա, որտեղ սեփական մեղքից տառապել և զղջում կա, որտեղ պատրաստ են մերձավորին ներելու և նրա հետ հաշտվելու, այնտեղ կարելի է մեղքերի քավություն ապրել: Դա շատ պարզ է, սիրելի եղբայրներ և քույրեր: Մենք պետք է մի քիչ ավելի շատ այս ուղղությամբ մտածենք այն ողորմածությամբ, որը մեզ նվիրել է Տեր Հիսուսը: Քանի որ նրա ողորմածությունն այնքան մեծ է, մենք պետք է նրան սիրենք: Մենք մնալու ենք նրան հավատարիմ, ինչ էլ պատահի:Մենք ծառայելու ենք նրան: Մենք ներելու ենք մեր մերձավորին, քանի որ ուզում ենք նրան դուր գալ: Մենք պետք է ուժեղ հավատ ունենանք, որը պետք է սիրով արտահայտվի: Մենք պետք է միշտ քննենք մեզ: Մենք պետք է մեզ դեպի լավը փոխենք: Մենք պետք է Տեր Հիսուսին նմանվենք: Մենք տառապելու ենք մեր մեղքերի պատճառով, մենք զղջալու ենք, մենք պետք է մեր մերձավորին ներենք և նրա հետ հաշտվենք: Մենք պետք է Տիրոջը հետևենք և նրա հետ հավերժ միասնության մեջ լինենք, և որտեղ միշտ հավատ կա, որը գործում է սիրով, կհասնեն քավության:

Սիրելի եղբայրներ և քույրեր, սա չպետք է լինի աստվածաբանական զեկույց, ընդունեք այն որպես Սուրբ Հոգուց բխող մտքեր, որոնցով մենք պետք է զբաղվենք, և ես կարող եմ ձեզ վստահեցնել, ինչքան հաճախ այս մտքերով զբաղվենք, այնքան հաճախ Աստված մեզ կօրհնի:

Սիրելի եղբայրներ և քույրեր, սա չպետք է լինի աստվածաբանական զեկույց, ընդունեք այն որպես Սուրբ Հոգուց բխող մտքեր, որոնցով մենք պետք է զբաղվենք, և ես կարող եմ ձեզ վստահեցնել, ինչքան հաճախ այս մտքերով զբաղվենք, այնքան հաճախ Աստված մեզ կօրհնի:

Հիմնական մտքեր

Մենք սիրում ենք Հիսուս Քրիստոսին, քանի որ նա իր քավությունն է նվիրել մեզ: Որպեսզի այն ստանանք, պետք է Հիսուս Քրիստոսին հավատանք: Ճշմարիտ հավատը արտահայտվում է Քրիստոսի հանդեպ սիրով;

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Շրջանային առաքյալ Ռ, Շթորքը ինտերակտիվ զրույց է անցկացնում Գյումրիի համայնքում

Նորություն Հայաստանից

Շրջանային առաքյալը այցելեց Հայաստան

Հայաստան. Շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը իր պաշտոնավարման ընթացքում երկրորդ անգամ է այցելում Հայաստանի համայնքներ: Այս անգամ նրան ուղեկցում էին առաքյալներ Պավել Գամովը և Վիլհելմ Հոյերը: Ուղևորության պլանում ընդգրկված էին հինգ ժամերգություն և սպասավոր եղբայրների ու ուսուցչական անձնակազմի համար սեմինար: Հինգ օրերի ընթացքում ճանապարհորդող խումբը մեքենայով անցավ շուրջ 1. 000 կիլոմետր:

2016-ի հոկտեմբերի 7-ի ուրբաթ առավոտյան, գիշերային թռիչքից հետո, Հայաստանի մայրաքաղաք Երևանում հանդիպեցին շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը և առաքյալ Վիլհելմ Հոյերը: Կեսօրին ուղևորությունը շարունակվեց դեպի երկրի հյուսիս- արևելքում գտնվող Գյումրի քաղաք, որը Երևանից հեռու է մոտ 150 կիլոմետր: Այնտեղ 73 նորառաքելական քրիստոնյաներ և հյուրեր սպասում էին շրջանային առաքյալի ժամերգությանը:

Շրջանային առաքյալ Շթորքի քարոզի հիմքում ընկած էր 2. Մովսեսի 3;5-ի աստվածաշնչյան խոսքը ,,Աստված ասաց.,, Մի մոտեցիր այստեղ: Կոշիկներդ հանիր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է,,: Ժամերգության ժամանակ Աստված հայտնվում է զոհասեղանի մոտ՝ միտքը շարունակելով ասաց նա. ,,Ակնածանքով և հեզությամբ դրանց կանոնավոր մասնակցելը բերում է օրհնություն,,. միտքն այսպես եզրափակեց շրջանային առաքյալը:

Ժամերգություն Երևանում

Հաջորդ ժամերգությունը տեղի ունեցավ շաբաթ կեսօրին Երևանի կենտրոնի նորառաքելական եկեղեցում՝ 52 մասնակիցներով: Այդ ժամերգությանը ներկա էին նաև Երևանի հարավ- արևմտյան և Սևանի համայնքների հավատացյալները: Որպես աստվածաշնչյան խոսք ընտրված էր Ղուկասի 7;47-ը. ,,Դրա համար քեզ ասում եմ. իր անհամար մեղքերը կներվեն սրան, որովհետև ուժգին սիրեց, քանզի ում շատ է ներում, շատ է սիրում, և ում սակավ՝ սակավ,,: Այդ ժամերգության ժամանակ շրջանային առաքյալը տեղեկացրեց այն ավետիսը, որ մարդկանց սերը Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ պատասխանն է նրա ողորմածության:

Ավարտից հետո շարունակվեց ճանապարհը դեպի մոտ 200 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Վանաձոր քաղաք: Այնտեղ, կիրակի կեսօրին նախ

տեղի ունեցավ սեմինար Հայաստանի սպասավոր եղբայրների և ուսուցչական անձնակազմի համար: Հոգևոր մասի հիմքում, որը շրջանային առաքյալը անցկացրեց 26 մասնակիցների հետ, ընկած էր Եզեկիելի 3;17-ի խոսքը. ,, Մարդու Որդի, ես քեզ դետ կարգեցի Իսրայելի այդ տանը դու ինձնիցպատգամեր ես լսելու և իմ անունից սպառնալու ես նրանց,,:

,,Պահակը պետք է արթուն լինի, լավ տեսնի և կարողանա վտանգը ճիշտ գնահատել ու ժողովրդին զգուշացնել ,, միտքը շարունակեց շրջանային առաքյալը և որպես վտանգներ նշեց հնազանդության ու աստվածավախության պակասությունը: Այնուհետև քննարկվեց եկեղեցու ստրատեգիան Հայաստանում հաջորդ հինգ տարիների համար: Այս առումով, մի կողմից՝ քննարկվեցին ֆինանսավորման, մյուս կողմից՝ մատաղ սերնդի հոգիների խնամքի հարցերը:

Միայն միակ Աստծուն ծառայել

Կեսօրից հետո տեղի ունեցավ այս ուղևորության երրորդ ժամերգությունը Վանաձորում, որին հրավիրված էր նաև մոտ 55 կիլոմետր հեռավորությունից եկած Ստեփանավանի համայնքը: 86 մասնակիցներ հետևում էին շրջանային առաքյալի քարոզին, որը հիմված էր 2. Մովսեսի 20;23-ի խոսքի վրա. ,, Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի եգիպտացիների երկրից՝ ստրկության տնից: Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար,,: Շատ ակնառու ձևով շրջանային առաքյալը պարզաբանեց, որ միայն միակ Աստծուն պետք է ծառայել:

Երկուշաբթի օրը ծրագրված էր ևս երկու ժամերգություն: Առաջինը տեղի ունեցավ Ալավերդիում, որտեղ ուրախ համայնքը սրտանց դիմավորեց ժամանողներին: 44 մասնակիցներ, այդ թվում նաև Օձունի համայնքը, , վայելեցին քարոզը, որի հիմքում շրջանային առաքյալը դրել է Սաղմոս 96;6-ի խոսքը ,, Եկեք, երգրպագենք նրան, խոնարհվենք ու լաց լինենք մեր Արարչի՝ Տիրոջ առաջ,,:

Այց Կաճաճկուտ

Մի քիչ դադարից հետո, դժվարանցանելի ճանապարհով ուղևորվեցին դեպի Կաճաճկուտի համայնք: Ձմռան ամիսներին ձյան և զառիվեր ճանապարհի պատճառով համայնք այցելելը անհնար է դառնում: Ժամերգության 86 մասնակիցներ հետևում էին 2. Թեսաղոնիկեցիների 1;3-ի աստվածաշնչյան խոսքին. ,, Եղբայրներ, պատրաստ ենք միշտ գոհություն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպես որ արժանի իսկ է. քանի որ ավելի ու ավելի է աճում ձեր հավատը, և շատանում է ձեզնից յուրաքանչյուրի սերը միմյանց հանդեպ,,:

Երևանի համայնքի աղջիկների երգչախումբը հոգեպարար կատարումներով գեղեցկացնում է ժամերգությունը

Ժամերգության մասնակիցները շնորհակալական խոսքերով են հրաժեշտ տալիս շրջանային առաքյալ Ռ. Շթորքին

Այստեղ, ավանդաբար, ժամերգության ավարտից հետո ուղևորները մինչ Երևան մեկնելը հրավիրվում են սեղանի մոտ՝ հյուրասիրվելու: Երեքշաբթի գիշերը սկսվեց շրջանային առաքյալ Շթորքի և առաքյալ Վիլհելմ Հոյերի ետադարձ թռիչքը՝ Վիեննայով դեպի Դյուսսելդորֆ:

Խորացնել հավատն ու ճանաչողությունը

Ուղևորության ընթացքում շրջանային առաքյալ Շթորքը ամենագլխավորը համարեց նորառաքելական քրիստոնյաների հավատի և ճանաչողության խորացումը: Այս առումով, նա հատկապես կարևորեց ժամերգությունների սրբության և Սուրբ Ընթրիքի խորհրդի գիտակցումը:

Յուրաքանչյուր ժամերգությունից հետո շրջանային առաքյալը հարցեր էր առաջադրում ժամերգության բովանդակության վերաբերյալ, որպեսզի եզրահանգի, թե ինչքանով են ընկալելի եղել ժամերգության հիմնական մտքերը: Դրանից բացի, քննարկվում էին ստրատեգիական, կազմակերպական և կառուցողական կարևոր հարցեր: Բոլոր համայքներում բաժանվեց ,,Community,, –ի հայերեն թարգմանությունը:

Դավիթն ու Հոփսաթանը

/ 1. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18-20/

Այն բանից հետո, երբ Դավիթը կռվում հաղթեց փարիսեցի Գողիաթին, ապրեց Սավուղ թագավորի՝ Հոփսաթանի հոր տանը: Դավիթն ու Հոփսաթանը ընկերներ էին:

Ընդհանուր առմամբ, Հոփսաթանը պետք է թագավոր դառնար, քանի որ նա թագավորի որդին էր: Սակայն Աստված Դավթին էր ընտրել որպես հետնորդ: Հոփսաթանը չէր նախանձում այդ բանի համար: Դավիթն իր ընկերն էր, նա սիրում էր նրան: Որպեսզի Հոփսաթանը իր սերը Դավթին ցույց տար, նրան է նվիրում իր ծիրանին, սուրը, աղեղը և գոտին: Սակայն Սավուղ թագավորը նախանձում էր Դավթին, քանի որ նա լավ մարտիկ էր և մարդիկ նրան թագավորից ավելի կսիրեին:

Սավուղը գնալով ավելի էր զայրանում և մի օր նիզակ է նետում Դավթի ետևից: Երկու անգամ Դավիթը կարողանում է խուսանավել: Բայց Սավուղն ուզում էր Դավթին սպանել: Հոփսաթանը զգուշացնում է իր ընկերոջը. ,, Թաքնվիր մինչ առավոտ: Ես իմ հոր հետ կխոսեմ և կհայտնեմ քեզ նրա մտադրության մասին,,: Հոփսաթանը խոսում է իր հոր հետ և բարեխոսում Դավթի համար.,, Նա իր անձը վտանգի ենթարկելով՝ սպանել է հսկա Գողիաթին, նա ոչ մի մեղք չի գործել քո դեմ: Ինչու՞ Դավթին ի զուր սպանելով անմեղ արյան մեղքի տակ մտնես,,: Սավուղը խոստանում է իր որդուն, որ Դավթին չի փսասի: Հոփսաթանը դա հայտնում է Դավթին: Նա վերադառնում է: Սակայն թագավորը մոռանում է իր խոստումը և նորից նիզակ է նետում Դավթի վրա: Նա կարողանում է խույս տալ: Այդ նույն գիշեր



նա փախչում է: Նա նորից է վերադառնում, որպեսզի իր ընկեր Հոփսաթանին հարցնի.,,Հոփսաթան, ի՞նչ եմ արել, ո՞րն է հանցանքս, ի՞նչ մեղք եմ գործել քո հոր դեմ, որ մտադրվել է ինձ սպանել,,:
Հոփսաթանը պատասխանում է.,,Դու չպիտի մեռնես, առանց ինձ հայտնելու նա ոչ մի գործ չի անում, այդպիսի բան չկա,,:
,,Այո, - ասում է Դավիթը,-քո հայրը լավ գիտի, որ ես շնորհ եմ գտել քո աչքում, ու դրա համար էլ կմտածի, թե Հոփսաթանն այդ մասին թող չիմանա, թե չէ դժգոհ կլինի,,:
Հոփսաթանն ուզում էր համոզվել, թե արդյոք Դավիթը ճիշտ է: Ապա նա ուզում է սպասավորներից մեկի հետ վերադառնալ և երեք նետ է արձակել: Եթե նա իր սպասավորին, ով հավաքում էր նետերը, ասի.,, Նետերը ընկած են քո ետևում,, , ապա ամեն ինչ կարգին է և Դավիթը կարող է վերադառնալ թագավորի տուն: Եթե նա սպասավորին ասի.,,Նետերը ընկած են քո առաջ,, , ուրեմն, վտանգ է սպառնում և նա ստիպված պետք է փախչի:

Երկու ընկերները կրկին հավատարմության երդում են տալիս: Դավիթը թաքնվում է դաշտում:
Այդ ընթացքում պալատում մեծ տոն էր նշվում: Սավուղը հետաքրքրվում է, թե ինչու Դավիթը այդտեղ չէ: Հոփսաթանը հոգ էր տանում իր ընկերոջ հեռու մնալու համար: Սավուղն այնքան է զայրանում, որ Հոփսաթանը Դավթի կողմն է, որ նա մի նիզակ է նետում սեփական որդու ետևից: Այդ ժամանակ Հոփսաթանը հասկանում է, որ Դավիթը ճիշտ էր: Նա պետք է փախչեր:
Այդ գիշեր Հոփսաթանը չի կարողանում ոչինչ ուտել, այնքան տխուր է: Իր սպասավորի հետ նա գնում է դաշտ, որպեսզի Դավթին զգուշացնի: Նա նետում է երեք նետ և ձայն տալիս Դավթին.,, Նետերը ընկած են քո առաջ,, : Նա սպասավորին է տալիս նետերն ու աղեղը և առաջ ուղարկում: Նա ուզում է Դավթին մեկ անգամ էլ տեսնել: Երկուսն էլ լաց են լինում, քանի որ ստիպված են բաժանվել:

Դավիթը Սաղուղի կողմից թագավոր է օծվում: Որպես Սավուղ թագավորի տավիղ նվագող և զինակիր՝ նա ապրում է պալատում և ամուսնանում նրա դստեր հետ: Սավուղի մահից հետո նա շուրջ 30 տարի թագավորում է Հրեաստանը, յոթ տարի անց թագավորում է Իսրայելի բոլոր տասներկու ցեղերին: Նա նվաճում է Երուսաղեմը և դարձնում նոր մայրաքաղաք: Իր թագավորությունն ամրացնում և մեծացնում է հարևան ժողովուրդների դեմ տարած բազում հաղթանակների շնորհիվ: Դավիթը կառավարում է Ք. ա. մոտավորապես 1004-ից 965 թվականներին: Դավիթը Սողոմոնին կարգում է որպես իր հետնորդ և մոտ 70 տարեկանում մահանում է Երուսաղեմում:

Միրելլա Ֆորտունատո

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Գիտե՞ք որտեղ է գտնվում Լոմեն: Ո՞չ: Լոմեն Տոգոյի՝ Արևմտյան Աֆրիկայի մի փոքրիկ երկրի մայրաքաղաքն է: Տոգոյում ապրում է վեց մլիլիոն մարդ, նրանցից մեկը ես եմ՝ Մաքսվելը: Այստեղ դուք տեսնում եք ինձ՝ իմ ընտանիքի հետ,իմ հայր Դոմինիկը, իմ մայր Էդիթը և իմ քույր Ջենիֆերը:

Ջենիֆերն ու ես միասին հաճույքով խաղում ենք: Մայրս երգում է համայնքի երգչախմբում, երբ նա երգչախմբի փորձերին է գնում, մենք էլ ենք գնում նրա հետ և փորձում ենք նրանց հետ երգել այն երգերը, որոնք սովորում է երգչախումբը:



Ես մի ընկեր ունեմ, Դավիթը, ով ապրում է մեր դիմացի բնակարանում: Դավթի հետ ես հաճույքով ժամերգություն եմ խաղում, մենք փորձում ենք հորս նման աղոթել: Նա շրջանային ավագ է:

Սովիփեում՝ Լոմեի թաղամասերից մեկում գտնվող մեր համայնքը Տոգոյի նորառաքելական եկեղեցու ամենամեծ համայնքն է: Մեզ մոտ միշտ ին չ-որ բան պակասում է: Մենք ունենք աղոթողների շրջանակ, կիրակնօրյա դպրոց, կրոնակլան պարապմունքներ և երգչախումբ: Ես այնտեղ հաճույքով հանդիպում եմ այլ երեխաների:

Թեև ես ընդամենը չորս տարեկան եմ, արդեն դպրոց եմ գնում: Երբեմն ես իմ դասընկերներին հրավիրում եմ ինձ հետ ժամերգության գալու: Ես շատ եմ ուրախանում, երբ նրանք ինձ հետ գալիս են:

Երբ իմ քույրը մեկ տարեկան դարձավ, մենք իմ մայրիկի, իմ ընկեր Դավիթի և մեր զարմիկ Դելալիի հետ ծովափ գնացինք: Այնտեղ ես առաջին անգամ ծով տեսա:

Դավիթի ու ինձ համար շատ հաճելի էր ծովափին և ջրի մեջ, բայց ես շատ զգույշ էի, քանի որ լողալ չէի կարողանում:

Ծովափ այցից հետո մենք այցելեցինք Լոմեի Անկախության հրապարակ, այն գտնվում է Տոգոյի Ազգային ժողովի շենքի դիմաց: 1960-ի ապրիլի 27-ին Տոգոն անկախացավ, դրա մասին է հիշեցնում հրապարակի մեծ հուշարձանը:

Էքսկուսիայից հետո քաղց են զգում, այդ պահին իմ սիրած ուտեստը՝ հավի գրիլը, էլ ավելի համեղ է դառնում: Ի դեպ, սպագետին էլ եմ շատ սիրում:

Ես պետք է լավ սնվեմ, քանի որ մարզիկները շատ էներգիայի կարիք ունեն: Այսպես, Դավիթն ու ես ամեն ազատ պահի ֆուտբոլ ենք խաղում: Դա մեզ հաճույք է պատճառում, և ես կարծում եմ, որ մենք արդեն լավ հարձակվողներ ենք:

Լուսանկարը՝ մասնակցի

Աղոթք և զոհաբերություն

2015-ի սեպտեմբերին լույս տեսավ ,,Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերում և պատասխաններում,, գիրքը: Շուրջ 750 հարցերից և պատասխաններից community-ին առանձնացրել է մի քանի հարցեր և պատասխաններ – այս հրատարակության մեջ խոսքը գնում է նորառաքելական քրիստոնյայի և նրա հավատքային կյանքի մասին, այն է՝ աղոթք և զոհաբերություն, ամուսնություն և ընտանիք:

Ի՞նչ ենք հասկանում աղոթքի ներքո:
Աղոթքը հնարավորություն է, որ Աստված մարդուն տվել է, որպեսզի իր հետ կապի մեջ լինի: Աղոթքով հավատացյալը զգում է, որ Աստված ներկա է, Աստված լսում է, Աստված պատասխանում է: Այսպես, հավատացյալ մարդը հեզությամբ խոնարհվում է Աստծո մեծության և սիրո առաջ: Սուրբ Հոգին ազդակներ է տալիս ճիշտ աղոթքի համար:

Անհրաժե՞շտ է աղոթելը:
Աղոթելը երբեմն բնութագրվում է որպես ,, հոգու շունչ,,: Այս պատկերը պետք է պարզաբանի հավատի համար աղոթելու անհրաժեշտությունը: Հավատն առանց աղոթքի՝ կենդանի հավատ չէ: Աղոթքն առանց հավատի՝ իսկական աղոթք չէ:

Ի՞նչ ցուցումներ է տվել Հիսուսը աղոթելու վերաբերյալ:
Լեռան քարոզում Հիսուսը կարևոր ցուցումներ է տվել աղոթելու վերաբերյալ / հմտ. Մատթեոս 6;5-8/: Չպետք է աղոթքը ցուցադրաբար լինի և չպետք է շատ խոսքեր պարունակի: Աստծուն պետք է դիմել որպես ,,Հոր,,: Աղոթքը պետք է սրտից բխի: Իր գալստյան տեսանկյունով Հիսուսը հիշեցնում է. ,, Արթուն կացեք այսուհետև, ամեն ժամ աղոթք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ,, / Ղուկաս 21;36/:

Ի՞նչ է տեղեկացնում Աստվածաշունչը Հիսուսի աղոթքային կյանքի մասին:
Ավետարանները վկայում են, որ Հիսուսը հաճախ առանձնանում էր, որպեսզի աղոթի: Ղուկասի Ավետարանում հաղորդվում է, որ Հիսուսը աղոթում էր հատկապես վճռական իրադարձություններից առաջ՝:

- նախքան Սուրբ Հոգին իր վրա կիջներ / հմտ. Ղուկաս 3;21,22/,
- նախքան կընտրեր տասներկու առաքյալներին / հմտ. Ղուկաս 6;12/,
- նախքան Հայրը նրան այս և այն աշխարհների վկաների առաջ կկերպարանափոխվեր / հմտ. Ղուկաս 9;28-36/,
- նախքան իր տառապանքները սկսվելը / Ղուկաս 22;41-46/,
- նախքան խաչի վրա մահը / հմտ. Ղուկաս 23;46/:

Հատկանշական է այն, որ Հիսուսն արդեն շնորհակալություն էր ասում, նախքան իր աղոթքը լսելի դառնալը / հմտ. Հովհաննես 11;41,42/:

Լուսանկարը՝ charlieunal 1 - Fotolia.com

Ինչպե՞ս պետք է աղոթենք:
Աղոթքը արտաքին ձևի հետ կապ չունի: Այնուամենայնիվ, աղոթելու ուժգնությունը կարող է, օրինակ, աչքերի փակման, ձեռքերի ծալման կամ ծնկաչոք դիրքի միջոցով լինի: Դրանով աղոթողը առանձնանում է իր առօրյա զբաղվածությունից, ներքնապես կենտրոնանում է և հեզությամբ խոնարհվում Աստծո առաջ: Նորառաքելական քրիստոնյաներն օրը սկսում և ավարտում են աղոթքով: Նրանք աղոթում են նաև ուտելուց առաջ: Օրվա ընթացքում ևս միշտ դիմում են Աստծուն, որպեսզի նրա մոտիկությունը զգան և նրա օգնությունը փնտրեն: Ընտանիքներում ծնողները աղոթում են երեխաների հետ և նրանց մղում դեպի անձնական աղոթքային կյանք:

Ի՞նչ բովանդակություն ունի աղոթքը:
Աղոթքի բովանդակությունը բաղկացած է երկրպագությունից, շնորհակալությունից, խնդրանքից և բարեխոսությունից:

Ինչպե՞ս է կատարվում երկրպագությունը:
Աստծո վեհության գիտակցումը հանգեցնում է նրան երկրպագելուն. ,,Եկեք երկրպագենք նրան, խոնարհվենք ու լաց լինենք մեր Արարչի՝ Տիրոջ առջև,,/ Սաղմոսներ 95;6/:

Ի՞նչ է բովանդակում շնորհակալությունը աղոթքում:
Աղոթքում շնորհակալությունն ընդգրկում է ամեն ինչ, որը գալիս է Աստծո բարությունից՝ խոսք, ողորմածություն և խորհուրդներ , ինչպես նաև երկրային ընծաներ, ինչպիսիք են՝ սնունդը, հագուստը, բնակարանը:.

Ի՞նչ խնդրանքներ ենք ներկայացնում Աստծուն:
Աստծուն ներկայացվում են բոլոր ցանկությունները: Դա վերաբերում է հավատի պահպանությանը, հրեշտակների պաշտպանությանը կամ առօրյայում նրա օգնությանը: Ամենանշանակալի խնդրանքը Քրիստոսի շուտափույթ գալստյան համար է և այն պահանջմունքի, որ ողորմածության արժանան:

Ինչու՞ ենք բարեխոսություն անում:
Բարեխոսությունը մերձավորի հանդեպ սիրո արտահայտություն է: Այն չի սահմանափակվում միայն ընտանիքով կամ համայնքով, այն ընդգրկում է բոլորին, ովքեր Աստծո օգնության կարիքն ունեն, լինի այս, թե՝ այն աշխարհում:

Ի՞նչ ազդեցություն ունի աղոթքը:
Աղոթքը ուժեղացնում է հավատը, Աստծո հանդեպ վստահությունը և նվիրում է Աստծո կողմից պատասխարվելու հավաստիացումը: Աղոթողը վստահ է, որ աղոթքից հետո իր բոլոր ցանկությունները Աստծո ձեռքում են. ,, Հայտնի դարձրու քո ճանապարհը Տիրոջը և դիր հույսդ նրա վրա, նա այնպես կանի, որ արդարությունդ կերևա,, / Սաղմոսներ 37;5/:

Ի՞նչ է ,,զոհաբերության պատրաստակամությունը,,: Ընդհանուր առմամբ, ,, զոհաբերության պատրաստակամության,, ներքո հասկանում են՝ իր ուժերն ու շնորհները մյուսների բարօրության համար ներդնելու և սեփական շահերը ետ մղելու մարդու ներքին պատրաստակամությունը:

Ի՞նչ են հասկանում ընդհանուր առմամբ ,,զոհաբերության,, ներքո:
,,Զոհաբերության,, սովորական կիրառումը վերաբերում է այն ընծաներին, որ մատուցում են Աստծուն: Դրա ներքո կարելի է հասկանալ նաև մարդկանց այն գործերը, որոնք արվում են ուրիշներին ծառայելու նպատակով: Դրամական միջոցները, որոնք նվիրաբերվում են կրոնական նպատակներով, կրոնական բառապաշարում բնորոշվում է որպես զոհաբերություն:

Ինչպե՞ս ենք պատկերացնում մեր զոհաբերությունը:
Մեր ,,զոհաբերության,, ներքո հասկանում ենք մեր ընդունակությունների ու կարողությունների, ժամանակի և ուժի ներդրումը Աստծո ու նրա գործի ծառայության համար: Եթե Աստծո գործին նպաստելու համար ինչ որ բանից հրաժարվում են, դա էլ է համարվում՝ զոհաբերություն: Հավատացյալների փափագն է՝ Աստծո հանդեպ շնորհակալությունն ու սերը արտահայտելու համար՝ կոնկրետ ընծաներ մատուցելը, լինեն դրանք՝ դրամական միջոցներ կամ բնամթերք: Ըստ Մաղաքիայի 3;10-ի՝ պետք է բերքի ,, տասանորդը,, բերել Աստծո տուն: ,,Տասանորդը,, կարող է հավատքի եղբայրների ու քույրերի զոհաբերական նվերների կողմնորոշմանը ծառայել: Վերջապես զոհաբերություն է այն ամենը, ինչը հավատացյալը սիրուց ելնելով անում է Աստծո համար:

Որ՞ն է զոհաբերության պատրաստակամության պատճառը:
Զոհաբերությունը ,քրիստոնեական իմաստով, չպետք է՝ հարկադրված պարտականություն լինի, ոչ էլ՝ դրա դիմաց ակնկալիքի սպասումով: Զոհաբերության պատրաստակամությունը, ավելի շատ, գալիս է Աստծու հանդեպ հավատից, շնորհակալությունից և սիրուց:

Ինչպե՞ս է արտահայտվում համայնքի զոհաբերության պատրաստակամությունը:
Համայնքի զոհաբերության պատրաստակամությունն անմիջապես երևում է նրանում, որ հավատքի բազմաթիվ եղբայրներ ու քույրեր իրենց ազատ ժամանակը, ուժն ու ունակություններն են ծառայեցնում համայնքին: Շատերը համագործակցում են երաժշտության և պարապմունքների ոլորտում: Շատ քիչ բացառությամբ, նաև ծառայող եղբայրներն են իրենց աշխատանքը պատվով կատարում:

Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսթրասե 233, 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրթեր շթրասե 23, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

|Ամուսնություն և ընտանիք

Ի՞նչ է ամուսնությունը:
Ամուսնությունը տղամարդու և կնոջ համատեղ կյանքն է, որ Աստված արժանացրել է օրհնանքի: Այն կազմում է ընտանիքի հիմքը: Նրա հիմքում է գտնվում հավատարմության խոստումը, որ ամուսնական զույգերը արտահայտում են ազատ կամքով: Երկուստեք սեր ու հավատարմություն են անհրաժեշտ հաջողված ամուսնության համար: Բազմամուսնությունը / պոլիգամե ամուսնություն/ չի համապատասխանում քրիստոնեական ուսմունքին և ավանդույթներին:

Ի՞նչ եզրահանգման պետք է գալ ամուսնության առումով՝ արարչագործության պատմությունից ելնելով:
,, Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. ,, Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան,,/ 1. Մովսես 1;27,28/: Երկուսն էլ՝ տղամարդը և կինը, ստեղծվել են Աստծու պատկերով: Տարբեր են , բայց երկուսն էլ հավասապես արժանի են Աստծո օրհնանքին:Մարդը պահանջ ունի ընկերակցության, ամուսնական զույգերի պարագայում տղամարդն ու կինը ունեն մեկը մյուսին, ում համար օգնություն պետք է լինեն. ,, Տեր Աստված ասաց. ,, Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար,, / 1. Մովսես 2; 18/: Ամուսնություն կնքելով՝ տղամարդն ու կինը մեկ միություն են կազմում, որը պետք է ամբողջ կյանքի համար լինի. ,, Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, ու երկուսը պետք է լինեն մի մարմին,,/ 1. Մովսես 2;24/:

Ի՞նչ նշանակություն ունի ամուսնության օրհնանքը:
Ամուսնության օրհնանքը արտացոլվում է տարբեր ձևերով՝ այն ուժեղացնում է երկարատև սիրո և հավատարմության ուժը, նպաստում է ծառայելու, օգնելու և հասկանալու պատրաստակամությանը, այն օգնում է սխալներից խուսափելուն: Սակայն ընդունած օրհնանքը միայն այն դեպքում կարտացոլվի, եթե ամուսնական զույգերը համապատասխան պահվածք ունենան:

Ի՞նչ նշանակություն ունի քրիստոնեական հավատը ամուսնություն կազմելիս:
Ցանկալի է, որ ամուսնական զույգերը հավատի հարցերում համամիտ լինեն: Բոլոր դեպքերում այն, որ ամուսնական զույգերը քրիստոնյաներ են, դեռ երաշխիք չէ ներդաշնակ ամուսնական կյանքի համար: Հատկապես, եթե ամուսնական զույգերը այլ մշակութային շրջանակից են, այլ կրոնի հետևորդներ են կամ այլ դավանանքի են պատկանում, պետք է ընդհանուր կյանքի բոլոր հարցերը ամուսնությունը կնքելուց առաջ պարզեն:

Ի՞նչ նշանակություն ունի սեռական հարաբերությունը ամուսնության մեջ:
Եթե երկուստեք հասկացողությունն ու սերն է առաջնայինը, ապա սեռական հարաբերությունը կարող է, որպես կարևոր կապող օղակ, ամուսնական միությունը ամրապնդել և նպաստել ամուսնական զույգերի առողջությանը: Սեռական հարաբերությունը ամուսնության մեջ պետք է հիմնված լինի արժևորման և զգացմունքայնության վրա:

Ինչպե՞ս է վերաբերում նորառաքելական եկեղեցին ընտանիքի պլանավորմանը:
Ընտանիքի պլանավորումը ամուսնական զույգերի ցանկությունն է: Սակայն եկեղեցին մերժում է հղիության կանխման մեթոդներն ու միջոցները, որոնք էական նշանակություն կունենան արդեն ձևավորված պտղի բջիջները սպանելու համար: Արհեստական բեղմնավորմանը հիմնավորապես համաձայն է, սակայն բոլոր միջացառումները, որոնց միջոցով մարդկային կյանքը կոչնչացվի, մերժվում են:

Ինչպե՞ս է Նորառաքելական եկեղեցին վերաբերում մասնագիտության և հասարակության մեջ պարտականությունների կատարմանը:
Մասնագիտության և հասարակության մեջ պարտականությունների կատարման համար կողմնորոշում են տալիս տասը պատվիրանները: Քրիստոնյայի առաջադրանքն է հասարակության բարեկեցությանը օժանդակելը: Յուրաքանչյուրը դրա համար պատասխանատու է: ,, Արդ, հատուցեցեք յուրաքանչյուրին իրենց պարտքերը, որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը…/ Հռոմեացիներին 13;7/:

Ինչպե՞ս է ընկալում Նորառաքելական եկեղեցին պատասխանատվությունը հասարակության մեջ:

Նորառաքելական եկեղեցին իր հնարավորությունների և իր առաջադրանքների շրջանակում օգնում է՝ նպաստելով մարդկանց ընդհանուր բարօրությանը: Նորառաքելական եկեղեցին օժանդակում է խաղաղության պահպանմանը աշխարհում, կոչ է անում հաշտվողականության և ներման: Այն մերժում է ուժի յուրաքանչյուր տեսակի կիրառում:

Նորառաքելական քրիստոնյաները ակտի՞վ են հասարակական կյանքում:

Այո, նորառաքելական քրիստոնյաները ակտիվ գործում են հասարակական կյանքում: Իր անդամների քաղաքական հայացքների և գործունեության վրա եկեղեցին ներգործություն չի ունենում: Նորառաքելական եկեղեցին հորդորում է իր անդամներին՝ ուշադրություն և համերաշխություն ցուցաբերել բոլոր մարդկանց հանդեպ անկախ սոցիալական ծագումից, տարիքից, լեզվից և այլ տարբերություններից:

Ի՞նչ հարաբերությունների մեջ է նորառաքելական եկեղեցին պետության հետ:

Նորառաքելական եկեղեցին արժևորում է բաց և կառուցողական հարաբերությունները կառավարության և գերատեսչությունների հետ: Այն կուսակցական-քաղաքական առումով չեզոք է: Իր գործունեության մեջ նա առաջնորդվում է տվյալ երկրի օրենքներով՝ նկատի ունենալով հռոմեացիներին ուղղված նամակի 13;1-ի խոսքը. ,, Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակի նրան, քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի, և եղած իշխանությունները Աստծուց են կարգված,,: Սա ենթադրում է, որ պետական իշխանությունն էլ պետք է աստվածային օրենքներով չափվի: Եկեղեցին կատարում է տվյալ երկրի օրենքներից և կարգադրություններից բխող պարտականությունները: Այն նաև ակնկալում է, որ իր հերթին ինքը էլ արժանա հարգանքի և ճանաչողության:

Ինչպիսի՞ն է նորառաքելական եկեղեցու հարաբերությունները այլ եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների և կրոնների հետ:

Նորառաքելակն եկեղեցին և նրա անդամները հարգում են այլ մարդկանց կրոնական հայացքները և չեն թերագնահատում այլդավանաններին, կրոններին և կրոնական կազմակերպություններին: Նրանք ձգտում են բարի, խաղաղ հարաբերության՝ երկկողմանի հարգանքի հիման վրա: Եկեղեցին մերժում է ցանկացած տեսակի կրոնական մոլեռանդություն: Քրիստոնեական այլ եկեղեցիների հետ երկխոսությունը՝ առանց արհամարհելու տարբեր ուսմունքների դրույթները, շեշտում է քրիստոնեական հավատի միասնականությունը:

Ինչպիսի՞ն է նորառաքելական եկեղեցու սոցիալական մոտիվացիան:

Նորառաքելական եկեղեցին պարտավորված է գործել Ավետարանով: Այն իր առաջադրանքը տեսնում է, այլոց շարքում, նաև ,, մերձավորին սիրելու,, պատվիրանի կիրառմամբ, որը ծառայում է մարդուն՝ առանց հաշվի առնելու նրա անձը: Իր սոցիալական մոտիվացիան իրականացնում է համայնքներից իրենց ծառայությունը հարգող օգնականների միջոցով, նաև նյութական օգնության տեսքով: Եկեղեցին իր հնարավորությունների շրջանակում պլանավորում, օժանդակում և հովանավորում է հանրօգուտ և բարերար նախագծեր, կառույցներ, ինչպես նաև օգնության գործողություններ ամբողջ աշխարհում՝ համարագործակցելով օգնող կազմակերպությունների հետ:

Լուսանկարը՝ Սոուդիա Ռոմանովիկ

Նախատեսում

01.01.2017	Բեռն/Շվեյցարիա
08.01.2017	Բեռլին/Գերմ
15.01.2017	Լոմե/Տոգո
20.01.2017	Սարի /Չադ
21.01.2017	Կումրա/Չադ
22.01.2017	Նջամենա/Չադ
12.02.2017	Կուլմբախ/Գերմանիա
17.02.2017	Գվինեա - Բիսաու/Գվինե- Բիսաու
18.02.2017	Գվինեա- Բիսաու/Գվինե- Բիսաու
19.02.2017	Սեդիիու/Սենեգալ
24.02.2017	Մփումալանգա/Հր. Աֆրիկա
26.02.2017	Դուրբան/Հր. Աֆրիկա
05.03.2017	Նոյմյունսթեր/Գերմանիա
12.03.2017	Սասքաթուն/Կանադա
14.03.2017	Քվեբեկ/Կանադա
19.03.2017	Վուփերթալ/Գերմանիա
26.03.2017	Եվր/Ֆրանսիա

New Apostolic Church
International